Հաշվետվություն

2019 թվականի փետրվարի 26-ից մարտի 1-ը Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սարհատ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2019 թ. փետրվարի 26-ից մարտի 1-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնակարանային և հողային կառավարման կոմիտեի հողերի (հողային ռեսուրսների) կառավարման աշխատանքային խումբ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի 11-րդ նիստին, որը տեղի է ունենում երկու տարին մեկ:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին գլխավոր համաժողովի օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Հողային ռեսուրսների կառավարման մարտահրավերները 2030 թ. կայուն զարգացման նպատակների (Sustainable Development Goals) և Նոր քաղաքային օրակարգի (New Urban Agenda) համատեքստում,
   - Հողերի կառավարման փոխակերպումը և հնարավոր զարգացումները,
   - Հողային ռեսուրսների վրա ազդեցություն ունեցող միտումները, ինչպիսիք են նոր գործարարական էկոհամակարգերը, նորարարական տեխնոլոգիաները, թվային մշակույթը,
   - Հողերի կոնսոլիդացումը Եվրոպայում և դրանց իրավական շրջանակը,
   - 2020-2021 թվականների աշխատանքային ծրագրի ներկայացում,

- Համագործակցություն անշարժ գույքի շուկայի խորհրդատվական խմբի հետ,
- Կարողությունների զարգացում և միջազգային փորձի փոխանակում:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Նիստի շրջանակում հանդես եմ եկել ելույթով՝ բլոկչեյն տեխնոլոգիաների վերաբերյալ, որոնք կարող են էականորեն փոխել համակարգերի հուսալիությունը և հավաստիությունը:

Հանդիպումներ են տեղի ունեցել Նորվեգիայի քարտեզագրության գործակալության (Kartverket), Բելառուսի, ինչպես նաև ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնակարանային և հողային կառավարման կոմիտեի ներկայացուցիչների հետ: Երկկողմ հանդիպումներ ու քննարկումներ եմ ունեցել՝

- Նիդեռլանդների կադաստրի, հողերի գրանցման և քարտեզագրության գործակալության տնօրեն Քիս դե Ջյուի հետ քննարկվել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի արխիվների թվայնացման համատեղ նախագծի իրականացման հարցը,
- Վրաստանի արդարադատության նախարարության հանրային ռեգիստրի ազգային գործակալության ներկայացուցիչ Մարի Խարջիանիի հետ քննարկվել է առաջիկայում փորձի փոխանակման նպատակով Վրաստան այց կազմակերպելու հարցը:

Երկօրյա միջոցառման ընթացքում հաստատվել են աշխատանքային նոր կապեր, նախանշվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության նոր հնարավորություններ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նիստի շրջանակում կայացել են Հողերի (հողային ռեսուրսների) կառավարման աշխատանքային խմբի բյուրոյի ընտրություններ, ինչի արդյունքում ընտրվել է բյուրոյի նոր կազմ:

Հաստատվել է 2020-2021 թվականների համար աշխատանքային ծրագիրը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ նիստն անցկացնել 2021 թվականի գարնանը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.**

Իր առջև դրված նպատակներն իրագործելու համար Հողերի (հողային ռեսուրսների) կառավարման աշխատանքային խումբը կկազմակերպի 4 աշխատաժողով, որոնք ուղղված կլինեն Եվրոպական տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում գիտելիքների և փորձի փոխանակմանը, սերտորեն կհամագործակցի անշարժ գույքի շուկայի խորհրդատվական խմբի հետ, կոնֆերանսների և սեմինարների միջոցով անդամ երկրներին կտրամադրի անհրաժեշտ խորհրդատվություն հողերի կառավարման վերաբերյալ:

Անդամ երկրների կառավարությունների նախաձեռնությամբ կիրականացվի տվյալ երկրի հողային ռեսուրսների կառավարման համակարգի գնահատում, և կտրամադրվեն այն բարելավելու ուղեցույցներ: Համակարգի գնահատումը կներառի նաև խնդրահարույց

հարցերի վերաբերյալ վերլուծությունների իրականացումը և հրապարակումը, որը կնպաստի ավելի թիրախավորված և արդյունավետ քաղաքականության վարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ակտիվ մասնակցել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Հողերի (հողային ռեսուրսների) կառավարման աշխատանքային խմբի 2020-2021 թվականների համար նախանշված գործունեությանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սարհատ Պետրոսյան

04.03.2019 թ.